Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11002/2025-ԵԱ2 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 2.Երևան-2 (Դավթաշեն, Աջափնյակ, Մալաթիա-Սեբաստիա) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.-30.06.2025թթ. |
| Ներկայացման օր | 04.07.2025 |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

2. **Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում.
- կենցաղային սպասարկում և խնամք.
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 150 շահառուի Երևանի Աջափնյակ, Դավթաշեն և Մալաթիա-Սեբաստիա համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 31 դեպքի վարում.

    ` վերափաստագրման գործընթացի կազմակերպում – 27

    ` անվճար հետազոտության և վիրահատության կազմակերպում - 2

    ` աջակցող միջոցի ձեռքբերման կազմակերպում – 2:

  Կարիքների վերհանման արդյունքում իրականացվել է 18 ուղղորդում. Ընտանիքի անապահովության միավորի մասին 44 տեղեկանքի ձեռքբերում. իրականացվել է կենսաթոշակի ստացման կարգի հետ կապված փոփոխություն. ներկայացվել է կենսաթոշակի վերահաշվարկի դիմում. 2 շահառուի համար դիմում է ներկայացվել Երևանի քաղաքապետարան՝ բնակատարածքի արտոնություն ձեռքբերելու համար. 3 շահառուի համար աջակցող միջոցի ձեռքբերման նպատակով ներկայացվել է ԵԱԾ-ի համալրման դիմում:

  Հոգեբանական աջակցության կարիք ունեցող 16 շահառուների հոգեբանի կողմից տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, որը միտված է եղել անձի ինքնազգացողության բարելավմանը. ներանձնային և միջանձնային խնդիրների. բարդույթների. կոնֆլիկտների կանխարգելմանն ու լուծմանը. դեպրեսիայի հաղթահարմանը, սթրեսի կառավարմանը և այլն:

  «Հուսո տուն» գերմանական բարեգործական կազմակերպությունից ստացվել է 3 սննդային փաթեթներ և հանձնվել կարիքավոր շահառուներին:

  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ. անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:

  Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում 19 շահառու մասնակցել է կազմակերպած 2 էքսկուրսիաներին՝ դեպի Դիլիջան և Գյումրի. և 11 միջոցառումներին և համերգային ծրագրերին, որոնք տեղի են ունեցել Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում, կամերային երաժշտության տանը, Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում. Երևանի Թումանյանի անվան այգում, ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոն ԴՈՍԿ-ում:

- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 150 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման. սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման. անհրաժեշտության դեպքում՝ կերակրման

հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, գրասանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:

- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 150 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի ծրագրից դուրս և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 56 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 16 շահառուի ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով: 3 շահառուի համար բուժքրոջ կողմից կատարվել է տնային պայմաններում հետազոտությունների իրականացման կազմակերպում, կատարվել է վերքի մշակում և վիրակապի փոխում (շարունակական) 2 շահառուի համար, 57 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա (ոմանց դեպքում՝ պարբերաբար), 2 շահառուի համար կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական), 1 շահառուի համար կատարվել է երակային ներարկում (շարունակական)՝ տեղամասային պոլիկլինիկայի հսկող բժշկի նշանակման հիման վրա: Թվով 12 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում՝ ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանքի առկայությամբ: 20 շահառուի համար կատարվել է դեղորայքի գնումներ (նաև դեղատոմսով), 3 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցրվել է բժշկական քարտից քաղվածք, 13 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայի բժշկի կողմից նշանակված դեղորայքային բուժման դեղատոմսը վերցրվել է և հանձնվել շահառուներին, 4 շահառուների համար կատարվել է ջերմաչափում, 1 շահառուի համար իրականացվել է Շտապ օգնության կանչ և կազմակերպվել տեղափոխումը դեպի բուժհաստատություն, 2 շահառուի համար իրականացվել է լսողական սարքի վերանորոգում:
  AMAA-Հայ Ավետարանչական ընկերակցության կլինիկայի հետ համագործակցության արդյունքում շահառուները անցել են հավելյալ հետազոտություններ, ինչի արդյունքում իրենց տրամադրվել է համապատասխան անվճար դեղորայք:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Դեպի Գյումրի կատարած էքսկուրսիայից կադրեր՝ տես հետևյալ հղումով. [https://www.facebook.com/100081543423963/videos/992397472756372/](https://www.facebook.com/100081543423963/videos/992397472756372/) )

Դեպի Դիլիջան-Հաղարծին կատարած էքսկուրսիայից կադրեր՝ տես հետևյալ հղումով. [https://www.facebook.com/100081543423963/videos/992397472756372/](https://www.facebook.com/100081543423963/videos/992397472756372/) ):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում.
- կենցաղային սպասարկում և խնամք.
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 150/150 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 135 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 6 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 4 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | - |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 6 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 144 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –2<br>Բ - 148 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 150 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 150 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 150 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 19 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 2 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական խորհրդատվություն | 16 |

Կազմակերպության ղեկավար ___*Երվանդ Մխիթարյան*___ «07»04.2025թ.